

ԻՐԱՎԱԿԱՆ Մշակույթ

Չկա Հասարակութեան
առանց իրավունքի
Ubi societas ibi jus

2010 թ. օգոստոս 30
Ե Լ Կ Ի Զ Մ Բ Թ Ի
թիվ 9 (57)

ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2010-2011 ՈՒՄ. ՏԱՐԻՆ

ԱՆՆԱԽԱՂԵՊ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ՄԻՆԴ 15-ՐԴ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՎԱՔԸ

«Իրավական մշակույթի զարգացումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում ՀԱԻԿ կրթամշակութային կենտրոնում 2010թ. հուլիսի 26-ից օգոստոսի 15-ը կազմակերպվեց Մարդու իրավունքների հայկական դպրոցի (ՄԻԴ) հերթական 15-րդ դասընթացի առաջին հավաքը:

Հավաքի նպատակն էր՝ բարձրացնել հանրակրթական դպրոցներում «Հասարակագիտություն» առարկայի «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք», «Բարոյագիտություն» բաղադրիչները դասավանդող ուսուցիչների տեսական գիտելիքների մակարդակը և կատարելագործել նրանց դասավանդման մեթոդական հմտությունները:

Ընդունելության մասին տեղեկատվությունը տարածվել էր հանրակրթական դպրոցներ առաքված նամակների, ՀԱԻԿ-ի կայքէջի՝ www.acrpc.am, Մարդու իրավունքների գրառանային քանցի միջոցով:

Սովորելու համար հանրապետության տասը մարզերից ստացվել էր 63 դիմում:

Ընտրությունը կազմակերպվեց ըստ հետևյալ չափորոշիչների՝

- Դիմորդ-ուսուցիչը դասավանդում է «Հասարակագիտություն» առարկան կամ առարկայի որևէ բաղադրիչ,

- երաշխավորագիր՝ դպրոցի տնօրենի կողմից առ այն, որ դպրոցն ավարտելուց հետո ուսուցիչը կշարունակի դասավանդել «Հասարակագիտություն» առարկան կամ առարկայի իրավական որևէ բաղադրիչ:

Սովորելու հրավիրվեցին 30 դիմորդներ:

Հավաքին անբողջությամբ մասնակցեցին 29 ուսուցիչներ հանրապետության տասը մարզերից:

Հուլիսի 26-ին կեսօրից հետո, ուսուցիչները սկսեցին ժամանել: ՀԱԻԿ աշխատակազմը նրանց դիմավորեց Վանաձորի ավտոկայանում և ուղեկցեց ՀԱԻԿ կրթամշակութային կենտրոն, որտեղ կազմակերպվեց ծանոթացման երեկո: Մի գրադարանին ծանոթանալուց հետո ուսուցիչները ստացան գրեմական պիտույքներով ու ծրագրային փաթեթով պայուսակներ: Ուսուցանողների թիվը ներկայացրեց դպրոցը, ուսումնական գործընթացի կարգը, ծրագիրը: Եղան հարց ու պատասխաններ:

Հաջորդ օրը՝ հուլիսի 27-ի առավոտյան, տեղի ունեցավ դասընթացի բացման շնորհանդեսը:

Բացման խոսքով հանդես եկավ և հյուրերին ու դասընթացի մասնակիցներին ողջունեց ՀԱԻԿ նախագահ Գևորգ Մամուկյանը: Մասնակիցներին օրինության և ողջույնի խոսք ասաց Գուգարացի թեմի առաջնորդ Տեր Սեպուհ Եպիսկոպոս Զուլյանը: Ողջույնի խոսք ասացին Էվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի Հայաստանում հատուկ ներկայացուցիչ Միլիա Զեհեն, Լուու փոխմարզպետ Արսեն Դարբինյանը: Դասընթացի մասնակիցներին իր գրավոր ողջույն էր հղել ԵԱԿԶ երևանյան գրասենյակի



ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինսոն, որում ավստում էր. «Հարգելի տիկնայք և պարոնայք, այսօր ինձ համար շատ հաճելի է Ձեզ ողջունել Մարդու իրավունքների հայկական դպրոցում այս դասընթացի բացման ժամանակ: Ցանկանում եմ նաև ողջունել Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի երկարատև ջանքերն այս դասընթացների կազմակերպման ուղղությամբ: Մենք հավատացած ենք, որ մի քանի տարի առաջ ՀԱԻԿ-ը մեծ պատասխանատվություն է վերցրել իր վրա, քանի որ ուսուցիչների համար հասարակագիտության առարկայի ընտրված բաղադրիչների դասընթացների կազմակերպումը հեշտ առաջադրանք չէ, իսկ դրանց կարևորությունը շատ դժվար է թերագնահատել: Այս ոլորտում ուսուցումը հզոր գործիչ է հանդուրժողականությունը և բոլոր մարդկանց արժանապատվության նկատմամբ հարգանքը խթանելու և ժողովրդավարական հասարակության, օրենքի գերակայության ու մարդկանց իրավունքների նկատմամբ հարգանքի համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ տրամադրելու գործում: ՀԱԻԿ-ի հետ մեր երկարատև համագործակցությունը ցույց է տվել, որ այն ունի անհրաժեշտ կարողություն, արհեստավարժություն ու հմտություն այս դասընթացները հաջող կազմակերպելու համար:

Շնորհակալություն և հաջողություն ձեզ»:

Շնորհանդեսից և հյուրերին ճանապարհելուց հետո մեկնարկեց հավաքի ուսումնական գործընթացը: Դասընթացը վարեց ՀԱԻԿ-ի ուսուցանողների, հրավիրված մեթոդիստների և փորձագետների թիվը: Ուսուցման կազմակերպման համագործակցային եղանակը (ՈՒԴԵ) ուսուցիչներին ներկայացրեց ՀՀ կառավարության Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) գլխավոր մասնագետ Վարդան Պարսամյանը: Հարց ու պատասխաններով, բուռն քննարկումներով ու կառուցողական բանավեճերով ընթացած ներկայացումից հետո սովորողները Բիվիին հակադրած մեթոդով փոփոխական կազմով զույգային աշխատանքով շարադրեցին ՈՒԴԵ հիմնական դրույթները: Հաջորդ օրը սովորողներն անցան հիմնական տեսական թեմաներին, որոնցից յուրաքանչյուրն ուսուցանվում էր համապատասխան մեթոդով:

ԶԱՑԻՆ ՀՊԳԵՎՊՐ

ՄԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶՈՒԼՋՅԱՆ

Ելթե ին երկրի
նեղակա միժնայր չի
գոհասլնում ու
մերսեռոզ ես
ասպազայի համար,
ուրեմն պարզասարիք
կրթչալ ու
հայրենաստեղ
նեղունկ



ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՀԵՒՄԻՆԿՅԱՆ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԱԿՏԸ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է 35 ՏԱՐԻ ԱՌԱՋ	էջ 2
ԵԱԿ-ի ՓՈՐՁՈՒՄ Է ԱՐՄԱՏԱՆԻՒ ԼՆԵԼ ՄԱՐԴԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆԸ	էջ 2
ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ ԵՈՆՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԸ ԶԵՆ ԿԱՐՈՂ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ԻՆՆԵԼ	էջ 2
ՄԻՆԴ 15-ՐԴ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐ	էջ 3
«ՀԱՄԱՐԱԿԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱԿԱՅԻՆ ՊԵՏՔ Է ՀԱՏ ԱՎԵԼԻ ԺԱՄԱՔԱՆԱԿ ՀԱՏԿԱՅՎԻ»	էջ 5
ԴՎԱԻԹ ԳՅՈՒԼԶԱԴՅԱՆ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆԻ ԲԱՆԱՏԵՂՈՒՄԻՆ ԸՆԿԱՄԱՐՈՒ ՈՒ ԿԵՐՊԱՎՈՐՄԱՐ	էջ 6
ՀՈԳԵՎՈՐ ԷԶ	էջ 7
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌՅԱՆՅ ՖՈՐՈՒՄ ԲՈՒՈՐԻ ՀԱՄԱՐ	էջ 8
ՏԵՂԵԿՈՒՄՅՈՒՆ - ԱԶԴ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	էջ 8

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

OSCE ՀԵԼՄԻՆԿՅԱՆ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԱԿՏԸ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է 35 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ԵԱԶԿ գործող նախագահ, Ղազախստանի արտաքին գործերի նախարար և պետքարտուղար Կանատ Սողաբաևը, օգոստոսի 1-ին Յեյսիևյան եզրափակիչ ակտի տարեդարձի առիթով հայտարարել է, որ այն ստորագրված պահից մինչ այսօր գործում է և չի կորցրել իր արդիականությունը ու կարևորությունը:

ՅԵԱ-ն ստորագրվել է Յեյսիևյանի 35 պետությունների առաջնորդների՝ նախագահների ու վարչապետների կողմից 1975թ. օգոստոսի 1-ին՝ սառը պատերազմի ճնշումն ու լարվածությունը թուլացնելու միտումով, որն էլ հիմք է հանդիսացել *Եվրոպայի Անվտանգության և համագործակցության կազմակերպության* ստեղծմանը:

Աճնախաղէպ իրադարձություն էր հատկապես Խորհրդային միության կողմից (Լ. Բրեժնև)

փաստաթղթի ոչ միայն ստորագրումը, այլև իրավաբանական մանուկում և գրքի տեսքով: Այն, անկասկած, նպաստեց իրավապաշտպան շարժման զարգացմանը Խորհրդային միությունում:

Ներկայումս ԵԱԶԿ-ն համարվում է Եվրոպայում անվտանգության և համագործակցության պատասխանատուն՝ գործելով ռազմաքաղաքական, տնտեսական, բնագիտական և մարդասիրական ոլորտներում:

Այս տարի ԵԱԶԿ զագաբնաժողովը տեղի է ունեցել Աստանայում, որն իր շուրջն է համախմբել ԵԱԶԿ 56 անդամ երկրների ղեկավարների: Գագաբնաժողովի նպատակն էր նպաստել համագործակցությանը Վանկովերից մինչև Վլադիվոստոկ՝ ապահովելով վերահաստատյալ և Եվրասիական երկրների անվտանգությունը:



ՕՇՈՒՄ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ըստ «Մարդու իրավունքների դիտակ» միջազգային իրավապաշտպան կազմակերպության տվյալների Օշուն տեղի ունեցած խռովությունը ծագել է Ուզբեկստանի ու Ղրղզստանի հանցախմբերի միջև ընդհարումների պատճառով և ընդգրկել ողջ քաղաքը՝ շարունակվելով խառնուրդների, դպրոցների, տների կողոպուտով, հրդեհումով ու կրակոցներով: Մարդու իրավունքների դիտակը դիմել է ղրղզական կառավարությանը, որ վերջինս անհապաղ միջոցներ ձեռնարկի երկրում բռնությունները դադարեցնելու համար: Իրա-

վապահ մարմինները խռովարարներին կանգնեցնելու համար արցունքաբեր զագ են կիրառել:

Մարդու իրավունքների դիտակը միաժամանակ դիմել է ՄԱԿ-ին և ԵԱԶԿ-ին՝ խաղաղ բնակչությանը տարահանելու, նրանց անհրաժեշտ սննդով, կացարաններով և դեղամիջոցներով ապահովելու ակնկալիքով:

Ըստ Առողջապահության նախարարության վերջին տվյալների՝ Օշուն բռնություններին զոհ են գնացել 46 մարդ, ավելի քան 600 մարդ ստացել են մարմնական տարբեր վնասվածքներ:

ԵԱԶԿ-ն ՓՈՐՉՈՒՄ Է ԱՐՄԱՏԱԽԻՆ ԱՆԵԼ ՄԱՐԴ-ԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Մարդավաճառության դեմ պայքարը համակարգող ԵԱԶԿ գլխավոր ներկայացուցիչ Մարիա Գրաջիա Ջիամարինարուն, ելույթ ունենալով ԱՄՆ-ում, ասել է, որ ԱՄՆ քաղաքական գործիչների, Արդարադատության և Առողջապահության նախարարությունների ներկայացուցիչների, ՈՊԿ-ների համատեղ պայքարի նոր մեթոդներն ընդդեմ խոշտանգումների արդյունավետ կարող են լինել: Մարդավաճառության զոհ դարձած անձինք, հիմ-

նակնուն տեխնիկները, հոգեբանական օժանդակության կարիք ունեն, քանի որ նրանք ֆիզիկապես ի վիճակի չեն պաշտպանվելու: Նա նաև նշել է, որ մարդավաճառությունը համամարդկային սպառնալիք է, իսկ որոշ անհատների համար՝ փող աշխատելու միջոց, և կոչ է արել իշխանություններին և քաղաքացիական հասարակությանը՝ համատեղ պայքարել երևույթն արմատախիլ անելու համար:



ԵՎՐՈՊԱՅԻ ՏԱՐԵՑՆԵՐԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՅ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եվրոպայում բնակվող հարյուր հազարավոր տարեցներ պայքարում են իրենց կյանքի ու գոյատևման համար: Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Գամբերեզը ասել է, որ Եվրոպական կառավարությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն խոցելի խմբերին պաշտպանելու և նրանց ապրելակերպը բարելավելու համար: Շատերն աղքատության են մատնված, քանզի անտեսվում են

իրենց երկրի իշխանությունների կողմից՝ գրկվելով աշխատանք կամ այլ զբաղմունք ունենալու հնարավորությունից:

Թոմաս Գամբերեզը նկատել է, որ այս իրավիճակի հիմնական պատճառը տնտեսական ճգնաժամը և կենսաքիմիայի կրճատումներն են, բայց այս երկրների կառավարությունները պարտավոր են անել հնարավորը մեղմելու վիճակը և բարելավելու մեծահասակների կյանքը:

- Մ Ա Ր Դ ՈՒ Ի Ր Ա Վ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ի Օ Ր Ա Յ ՈՒ Յ Յ**
- Օշոստոս 9 - Աշխարհի բնիկ ժողովուրդների միջազգային օր*
- Օշոստոս 12 - Երիտասարդուկության միջազգային օր*
- Օշոստոս 19 - Մարդասիրության միջազգային օր*
- Օշոստոս 30 - Բռնի անհետացած անձանց միջազգային օր*



ՍՈՒԴԱՆՈՒՄ ՀՈՒՐԶ 2.7 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ ԵՆՆԱՐԿՎԵԼ Է ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Աֆրիկյան Միություն-ՄԱԿ միացյալ խաղաղապահ առաքելությունը Դարֆուրում հայտարարել է, որ տեղեկություններ է ստացել արևմտյան տարածաշրջանում միջցեղային բախումների մասին, և կոչ է արել իրավապահ մարմիններին համատեղ ուժերով կանխել ընդհարումները: Բախումների հետևանքով կան զոհեր, որոնց ճշգրիտ թիվը դեռ պարզ չէ: Դարֆուրի արևմտյան գյուղերում՝ Բուգուլեյում և Թերեյում, 20 մարդ է զոհվել, ավելի քան 25-ը տարբեր մարմնական վնասվածքներ են ստացել: Դարֆուրի որոշ բնակելի տարածքներում շուրջ 7 տարի խոշտանգումներն ու բռնությունները չեն դադարում, որի հետևանքով արդեն մոտ 300.000 մարդ զոհվել է, 2.7 միլիոնը՝ վտարվել տներից:

Աֆրիկյան միություն-ՄԱԿ առաքելությունը ստեղծվել է՝ պաշտպանելու քաղաքացիներին և ճնշելու բռնությունները: Սակայն խռովարարները խոչընդոտում են խաղաղապահների գործողությունները, որի հետևանքով զոհվել են 27 խաղաղապահ զինվոր և ոստիկանության ծառայողներ:

ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԸՆԴՈՒՄՆԵԼԻ ԼԻՆԵԼ

Մարդու իրավունքների դիտակն իր զեկույցում նշել է, որ Գերմանիան, Ֆրանսիան և Միացյալ Թագավորությունն արտաքին հետախուզական կապերն օգտագործում են ահաբեկչության դեմ պայքարելու համար: 62 էջանոց «Ն մի խոսք խոշտանգումներ կիրառող երկրների հետ համագործակցության մասին» զեկույցում Մարդու իրավունքների դիտակը քննարկել է Եվրոպական այս երեք երկրների կառավարությունների հետախուզական և քաղաքական նպատակներով շարունակական հետախուզական համագործակցությունն այլ երկրների հետ, որն անթույլատրելի է միջազգային իրավունքով:

Մարդու իրավունքների դիտակը նշել է, որ Բեռլինը, Փարիզը ու Լոնդոնը պետք է պայքարեն խոշտանգումների դեմ, քանզի կտտանքների ենթարկելով տեղեկություն կորզելն ամօրինական է և պարզապես անթույլատրելի: Այս երկրների պաշտոնյաները, իրավիճակը ճիշտ գնահատելու բավարար հիմքեր չունենալով հանդերձ, նշել են, որ երբեմն խոշտանգումների միջոցով տեղեկությունների կորզումն ընդունելի է:

Ֆրանսիայի, Գերմանիայի ու Միացյալ Թագավորության՝ ահաբեկչության դեմ կիրառվող խոշտանգումների միջոցները պետք է արմատախիլ արվեն՝ պայքարելով և կանխելով նման դեպքերը:

Խնդրաբանության կողմից. Ահաբեկչության դեմ պայքարելու պատճառաբանությամբ խոշտանգումների օրինակաբանությունը խայտառակություն կլինի. այս առումով «քաղաքակիրթ» եվրոպական որոշ երկրներ գլոբալում են ետ միջնադար իլացնելով բռնությունների դեմ աղաղակող ձայները: Իրավագիտությունը վարդուց արդեն մերժել է «խոստովանությունը որպես ապացույցների թագուհի» սկզբունքը: Լավ է, որ նման միտումների դեմ հզոր դիմակայություն կա հենց Եվրոպայում, սակայն դա դեռևս բավական չէ: Անհրաժեշտ է վերջ տալ ցանկացած, այդ թվում՝ ահաբեկչության մեղադրանքով կալանավորված անձանց նկատմամբ կատարվող բռնություններին:

ՄԻՆԴ 15-ՐԴ ԴԱՍԸՆԹ-ԱՅԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐ



Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Գուգարաց բնիկ առաջնորդ Մեայուհ եպիսկոպոս Չուլջյանը և Լոռու փոխմարզպետ Արսեն Գալստիսյանը ողջունում են հավաքի մասնակիցներին



Ծանոթացման երեկո



ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Մերգիս Կասիմյանը դասախոսում է



Ուխտագնացները Օձունի Սուրբ Աստվածածին եկեղեցու քահանա Տեր Վրթանեսի հետ բաց խորանի առջև



ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը սովորողներին է սրամաղդում երեխայի իրավունքների վերաբերյալ նյութեր



Դասախոսում է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի Հայաստանի ներկայացուցիչ Լեյլի Մոշիքին



Հանգստի ժամին



Մասնակիցների ժամանումը ՀՄԿ



ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի Հայաստանի ներկայացուցիչ Լեյլի Մոշիքին մեկնաբանում է ցուցադրվող բեմատիկ տեսաֆիլմը



«Դստիկ ծովերում»



Հրաժեշտ



Սովորողները վոլեյբոլ են խաղում

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ



Ուսուցանող Տաթև Սարգսյանը ծանոթացնում է Ռիվինի մեթոդին

Սովորողներն հնարավորություն ունենին օգտվելու Մարդու իրավունքների գրադարանի համապատասխան գրականությունից:

Հավաքի ընթացքում իրականացվեցին հետևյալ հիմնական խնդիրները՝

ա) սովորողներին մատուցվեցին հանրակրթական դպրոցում պետական պարտադիր ծրագրով ուսուցվող «Հասարակագիտություն» առարկայի իրավական բաղադրիչների ու «Բարոյագիտության» վերաբերյալ տեսական գիտելիքներ, ուսուցման կազմակերպման համագործակցային եղանակը՝ հիմնված մարդու իրավունքների հարգանքի և համամարդկային արժեքների վրա:

բ) ուսուցման գործընթացում ձևավորվեց բարոյա-հոգեբանական բարենպաստ մթնոլորտ՝

- ապահովվեց անհատական մոտեցում յուրաքանչյուր սովորողի նկատմամբ,

- ձևավորվեցին սովորողների միջամեծային դրական, կառուցողական հարաբերություններ:

Հավաքի աշխատանքները կազմակերպվեցին ուսումնական ծրագրի չորս բաղադրիչների՝ «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք», «Բարոյագիտություն» մատուցմամբ՝ համագործակցային ուսուցման՝ Ռիվինի ուղիղ և հակադարձ,



ԳԹԿ գլխավոր մասնագետ, ուսուցանող Վարդան Պարսամյանը պատասխանում է սովորողների հարցերին

թեմաների փոխհաղորդման, անհատական հանձնարարությունների փոխատուզման, տակտային մեթոդներով, կազմակերպվեցին նաև նախնական ու ընդհանրական քննարկումներ և ստուգաբար:

Աշխատանքները կազմակերպվում էին այնպես, որ յուրաքանչյուր սովորող հնարավորություն ունենա ինքնուրույն սովորել, սովորեցնել, յուրացնել զուգընկերոջ պատճառով, ընդգրկվել ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման գործընթացներում՝ չունենալով որևէ ժամանակային սահմանափակում համձեռ-

արությունների կատարման համար և փոխկախվածություն մյուս սովորողների աշխատանքների ընթացքից:

Աշխատանքները միաժամանակ կազմակերպվում էին տարբեր մեթոդներով: Սովորողներից յուրաքանչյուրը, որոշ ժամանակ աշխատելով զույգերով, խմբերով կամ միայնակ, թեման ավարտելով, մոտենում է կառավարման վահանակի պատասխանատուին (ով կատարում է ուսումնական գործընթացի համակարգման, բաշխման գործառույթը) և ստանում նոր թեմա:

Ուսումնական գործընթացը չէր ընդհատվում օրվա ընթացքում, բացառությամբ ճաշի ընդմիջումից: Ամբողջ ժամանակաընթացքում սովորողներից յուրաքանչյուրն աշխատում էր իր թեմայի վրա՝ հիմնականում զույգերով (սուրճը, թեյը և բաղդրակները մշտապես առկա էին, և, հետևաբար, այդպիսի ընդմիջումների կարիք չկար):

Յուրաքանչյուր օրվա ավարտին չորս խմբերում սովորողները մեկական ուսուցանողի և կամավորի մասնակցությամբ կատարում էին ինքնանդրադարձ՝ քննարկելով և վերլուծելով օրվա աշխատանքը: Այնուհետև՝ ուսուցանողների թիմը քննարկում էր խմբերում արտահայտված կարծիքները, դիտողություններն ու առաջարկները և, հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի յուրաքանչյուր



Սուրբ պատարագ Օծունի Սուրբ Աստվածածին եկեղեցում

մաները, որոշում սովորողի հետագա եթուղին, որին համապատասխան կազմված ցուցակները առավելապես փակցվում էին կառավարման վահանակի մոտ:

Ինքնանդրադարձը սովորողներին և դասընթացի կազմակերպիչներին հնարավորություն էին տալիս գնահատել օրվա աշխատանքները, վերահսկել ուսումնական գործընթացը և հընթացս շտկել ի հայտ եկած բացթողումները, բարելավել աշխատանքները:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստեցին նաև կազմակերպված երկու ուխտագնացությունները: Օգոստոսի 1-ին կիրակի, սովորողները եղան Օծունի Սուրբ Աստվածածին եկեղեցում մասնակցելով Սուրբ պատարագին, որը մատուցեց Տեր Վրթանես քահանա Բաղայանը: Տեր Հայրը այնուհետև հոգևոր թեմայով գրույց ունեցավ սովորողների հետ և նրանց ուղեկցեց Արդվի Սուրբ Հովհան Օծնեցի կաթողիկոսի շիրմին, այնուհետև Հռոմեական: Օգոստոսի 8-ին սովորողներն այցելեցին Դսեղ՝ Սբ. Գր. Լուսավորիչ եկեղեցի և Հովհաննես Թումանյանի տուն-Քանդաքան:

Մի շարք թեմաների և մեթոդների շուրջ աշխատանքները հավաքի ընթացքում ամբողջությամբ չավարտվեցին, և սովորողները դրանց յուրացումը կաշարակարգվեցին հետագա ուսուցմամբ:

Ուսուցման համագործակցային եղանակը սովորողներին հնարավորություն տվեց զարգացնել զույգերով աշխատելու, ինքնուրույն սովորելու, դասավանդելու և սովորեցնելու, լսելու, ստեղծագործելու ունակությունները:

Յուրաքանչյուր թեմաների վերաբերյալ համապատասխան մասնագետների մասնակցությամբ կազմակերպվում



Հանդիպում Տեր Վահան քահանա Ազարյանի հետ

էին քննարկումներ, որոնց շնորհիվ թեմաների յուրացումն ավելի էր ամրապնդվում: Դասընթացին առաջին անգամ երկուական օրով իրավորված էին նաև համապատասխան դպրոցների տնօրենները՝ մասնակցելու ուսումնական գործընթացին, անձամբ ծանոթանալու ՌԻԵ-ին և ՄԻՀԴ-ի ու դպրոցի միջև արդյունավետ համագործակցություն հաստատելու համար: Տնօրենների մեծ մասը ցանկություն հայտնեց մասնակցելու, սակայն այդպիսի հնարավորություն գտան նրանցից միայն 5-ը՝ Արագածոտնի մարզի Սասունի գյուղի միջև. դպրոցի տնօրեն Ալվարդ Գալստյանը, Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 5 միջև. դպրոցի տնօրեն Գայանե Սաֆարյանը, Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի միջև. դպրոցի տնօրեն Ֆիրդուսի Նավասարդյանը, Լոռու մարզի Լեռնապատ գյուղի միջև. դպրոցի տնօրեն Արդա Սարուխանյանը և Սյունիքի Մարզի Կապանի թիվ 4 միջև. դպրոցի տնօրեն Էմիլիա Ջաքարյանը, ովքեր մասնակցեցին դասընթացին և համագործակցության պայմանագրեր ստորագրեցին ՀՍԿ-ի հետ: Մյուս դպրոցների տնօրեններին ուղարկվեցին պայմանագրերը՝ ծանոթանալու և ստորագրելու համար:

Հավաքի ընթացքում մեկուկես օր հատկացված էր ԵԱՀԿ-ի, ՀՀ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) և ԿԻՄԿ-ի ներկայացուցիչներին:

Օգոստոսի 6-ին «Բարոյագիտության ուսուցման հիմնախնդիրները» թեմայով դասախոսությամբ սովորողների առջև հանդես եկավ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի գործադիր տնօրեն, «Հասարակագիտություն» առարկայի դասագրքի «Բարոյագիտություն» բաժնի հեղինակ Սերոբ խաչատրյանը՝ ընթացքում կազմակերպելով խմբային աշխատանքներ:

Օգոստոսի 9-ին՝ օրվա առաջին կեսին, Մարդու իրավունքների ոլորտում ԵԱՀԿ-ի գործունեության մասին հետաքրքիր դասախոսությամբ հանդես եկավ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կա-



Շնորհակալության և երախտիցի խոսքեր է ասում ՄԻՀԴ Գալստիան շրջանավարտ Արտյոմ Աճորեայանը

ՆԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ

պիճուճ՝ պատասխանելով նաև սովորողների բազմաթիվ հարցերին: Նա նաև եՄԳԿ գրասենյակի կողմից բոլոր սովորողներին մեկական փաթեթ օժանդակ գրականություն նվիրեց:

Նույն օրվա երկրորդ կեսին՝ «երեխայի իրավունքների» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի Հայաստանի ներկայացուցիչ Լեյլի Մոշիրին՝ դասախոսությունը զուգորդելով տեսագրությունների ցուցադրմամբ:

Օգոստոսի 10-ից 11-ը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հայաստանյան պատվիրակության (Նվարդ խաչմանյան, Աննա Գասպարյան, Արամ Օրբելյան) ուսուցողական քննարկման մարտահրավերներով իրավունքի թեմայով մեկուկեսօրյա սեմինար վարեց ցուցադրելով նաև թեմատիկ տեսաֆիլմեր ԿԽՄԿ-ի, Հայկական կարմիր խաչի ընկերության գործունեության վերաբերյալ:

Օգոստոսի 12-ին և 13-ին սովորողների մի մասը, ովքեր յուրաքանչեք ստուգարքի համար նախատեսված թեմաները և մեթոդները, շարունակեցին աշխատել անհատական փոխառուցման քարտերով՝ նախապատ-

րասովելով համապատասխան ստուգարքին: Օգոստոսի 14-ին կազմակերպվեց գրավոր ստուգարք: Ստուգարքի գրավոր կազմակերպումը դասընթացի նորություններից մեկն էր, որը բարձրացրեց անաչառության աստիճանը, թուլացրեց բանավոր արտահայտվելու լարվածությունը:

Հավաքի վերջին օրը բոլոր սովորողներն ստորագրեցին պայմանագիր ուսումը շարունակելու վերաբերյալ: Յուրաքանչյուր սովորող ստացավ անհատական հանձնարարություններ: Ըստ պայմանագրի՝ սովորողը դպրոցում ուսումն ավարտում է, երբ ամբողջությամբ յուրացնում է ուսումնական ծրագիրը, հանձնում ստուգարքները և ավարտական քննությունը: Ուսումը հաջողությամբ ավարտող շրջանավարտները պարտավորվում են առնվազն երկու տարի շարունակել դասավանդել «Հասարակագիտություն» առարկայի իրավական բաղադրիչները:

15-րդ դասընթացի մյուս կարևոր նորությունն այն էր, որ ուսուցիչը վկայական է ստանալու ոչ միայն ստուգարքներ ու քննություններ հանձնելով, այլ նաև աշակերտների գիտելիքների և հմտությունների ստուգման արդյունքներից ելնելով:

Դասընթացի ավարտին՝ օգոստոսի 14-ի առա-

վոյան, «Քարոյագիտություն» բաղադրիչի շրջանակներում «Քրիստոնեական բարոյականությունը» թեմայով կազմակերպվեց հանդիպում Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հովիվ Տեր Վահան քահանա Ազարյանի հետ: Նույն օրը՝ օգոստոսի 14-ի երեկոյան, կազմակերպվեց հավաքի փակման արարողությունը:

Հեռակա ուսման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով դասընթացի յուրաքանչյուր մասնակից գրանցվեց Մարդու իրավունքների կրթության ֆորումում, որի միջոցով ստացավ անհատական հանձնարարության ժամանակացույցը, մեթոդով աշխատելու համար առաջարկվող զուգընկերների ցուցակը:

Սովորողներին տրվեցին եՄԳԿ երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան պատվիրակության, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, ինչպես նաև ՀՄԻԿ-ի Մարդու իրավունքների գրադարանի կողմից հատկացված թեմատիկ գրականություն, պատառներ, տեղեկատուներ:

«ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻՆ ՊԵՏՔ Է ՀԱՏ ԱՎԵԼԻ ԺԱՄԱՔԱՆԱԿ ՀԱՏԿԱՑՎԻ»

Հարաջողությամբ մարտի 14-ի Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հայաստանյան պատվիրակության (Նվարդ խաչմանյան, Աննա Գասպարյան, Արամ Օրբելյան) ուսուցողական քննարկման մարտահրավերներով իրավունքի թեմայով մեկուկեսօրյա սեմինար վարեց ցուցադրելով նաև թեմատիկ տեսաֆիլմեր ԿԽՄԿ-ի, Հայկական կարմիր խաչի ընկերության գործունեության վերաբերյալ:



- Տիկին Զաքարյան, առաջին անգամ դպրոցների տնօրենները ՄԻՉԴ դասընթացի մասնակից են: Դասընթացն այդքան կարևորում ե՞ք, որ և՛ Դուք եք ներկա, և Ձեր երաշխավորած ուսուցիչը:

- Անկեղծ ասած, տեղյակ չեմ դասընթացի մասին և երկմտում էի մասնակցել, թե ոչ: Երաշխավորեցի ուսուցչիս ոլորտի մի քանի ներկայացուցիչների ՄԻՉԴ հասցեին ասված դրական կարծիքներ լսելուց հետո:

Հրավերի համար շնորհակալ եմ: Առաջին օրը շատ տպավորված էի, զարմացել էի, թե ինչպես են աշխատում բոլոր լսարաններում: Ուսուցիչները կարծես չեն նկատում մտնող դուրս եկողին, խոսողին, բոլորն աշխատում են, սովորում, սովորեցնում: Ես այսպիսի դասընթացի նախկինում չեմ մասնակցել, կուզենայի այս դասընթացն ամբողջությամբ կազմակերպվեր նաև տնօրենների համար:

- Պարոն Նավասարդյան, ինչպիսի՞ն է «Հասարակագիտություն» առար-

կայի դասավանդման վիճակը Ձեր դպրոցում:

Կարելի է համարել բավարար, բայց միշտ էլ լրացնելու, նորություններ մտցնելու կարիք կա, և այդ ակնկալիքով եմ մեր ուսուցչին երաշխավորել, ուղարկել ՄԻՉԴ:

- Տիկին Զաքարյան, ի՞նչ ակնկալիքներ ունեք դասընթացից:

- Մի քիչ դժվար է միջնակարգ դպրոցի համար այդ ակնկալիքները ասել, բայց լավ բան եմ տեսնում, և այդ լավը մտադիր եմ մեր ուսուցչի հետ միասին փորձնականորեն կիրառել դպրոցում: Իսկ սպասված արդյունքի հասնելու դեպքում հնարավորինս կփորձեմ համագործակցային մեթոդը տարածել դպրոցում:

- Տիկին Զաքարյան, Մարդու իրավունքների դասավանդումը քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում ի՞նչ կարևորություն ունի:

- Ըստ եմ կարևորում և գտնում եմ, որ ժամանակակից է, որ Կրթության և գիտության նախարարությունը մտածի դպրոցներում «Հասարակագիտություն» առարկայի իրավական բաղադրիչներին շատ ավելի ժամանակ հատկացնելու մասին:

- Պարոն Նավասարդյան, ի՞նչ կարծիքի եք ՄԻՉԴ դասընթացի արդյունավետության մասին:

- Ըստ իս՝ դասընթացն արդեն կարելի է արդյունավետ գնահատել, քանզի ուսուցիչները շատ խանդավառված են աշխատում, նորություններ ակնհայտ են ու դրանք միշտ էլ գրավիչ են, իսկ ՄԻՉԴ ուսուցման եղանակը շատ նպաստում է դրան: Ինչպես ասում են ապագան ցույց կտա, բայց բոլոր նախադրյալները ստեղծված են ուսուցչի գիտելիքների մակարդակի բարձրացման համար:

- Ձեր դպրոցներում «Իրավական մշակույթ» թերթը ստան՞ն էք:



- Այո, ստանում ենք:
- Եվ որքանո՞վ է այն լրացնում ոլորտի տեղեկատվության պակասը:

- Այնտեղ լավ նյութեր են լինում, ընթերցում, քննարկում ենք: Քննարկում ենք ոչ միայն ոլորտի մասնագետ ուսուցչի հետ, այլ մանկավարժական կոլեկտիվով, աշակերտների հետ: Նախկինում ստանում էինք նաև «Վասն արդարութեան» ամսագիրը, և կուզենայիք, եթե հնարավոր է, վերստին ստանալ:

- Պարոն Նավասարդյան, ի՞նչ եք կարծում, կազմակերպության հետ համագործակցությունը կտա՞ն:

- Իհարկե, կազմակերպությունն առաջին գլխավոր քայլն արել է արդեն: Հերթը մերն է, մեր ուսուցիչները արդարացնելու բոլորին՝ «իրավական մշակույթ» ձևավորելու ուղղված ջանքերն ու հոյակերը:

Զրուցեց
ԳՈՒ ՍԱՐԳՅԱՆԸ

ՄԻՉԴ 15-րդ դասընթացի յուրաքանչյուր մասնակից վառ անհատականություն էր իր էությունը, մանկավարժական խառնվածքով: Իսկ Կոտայքի մարզի Նոր Երզնկայի դպրոցի ուսուցիչ Կամո Նազարյանը նաև ստեղծագործում էր:



Բարին՝ չո աչքերի թախիծն է հին, Արարը՝ նրա արցունքը նրբին: Դասա՝ աչքերից կրակները հուր, Պատիժ՝ սրտիս թրթռը ախար:

- Տու՛ր ինձ զնա՞նը չո կապանքների: Միդոս կարտա է այդ տառապանքին:

Իջնում է լքին մի իրիկամառու, Ինչպես աչքերի թախիծը կապույտ, Ու կապուտաշաղ այս լսալի միջին Իրիկամառն է երազս վերջին:

Ու երազիս մեջ արեւն աչքերի Կրակն է վառել հոգսած քունքերիս, Շողանքը անմեղ, շողանքը իրիկեզ Իճն դուր է գալիս...

ԼԵԶՎԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐԻՅ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀՈՒ ԸՆԿԱՎՄԱՄԲ ՈՒ ԿԵՐՊԱՎՈՐՄԱՄԲ

Մայրենի լեզվի բարեանությունը հայոց գրավոր մշակույթի մեջ սկսվել է գրեթե գլուսուր դարաշրջանից: Այսօր, երբ վերստին տարուբերվում և նույնիսկ պետական մակարդակով են բեկվում հայոց ինքնությունը ու սրա կերպը՝ կարևորագույնը պարզ է դառնում այն, թե ինչու են մեր գրի ու գրչի մշակներն այդպես ցավազուրկ են արձագանքել լեզվապահպանության խնդրին: Եվ հատկապես մեր ինքնապահպանման ոգուրումնի այս օրերին կարևոր են համարում կրկին անդրադառնալ Սիլվա Կապուտիկյանի լեզվի ու լեզվապաշարի ասպարեզուն դրսևորած գործին ու գործունեությանը: Ցավոք, այդ գործունեությունն իր «պահանջարկն» ունեցավ (և հիմա էլ ունի) մեր անկախ կարծեցյալ հայրենիքում:



Անբացատրելի է թվում այն, որ իր անկախությունը նաև հայոց պետական լեզվի գերակայությանը փաստող պետությունն այսօր այդ նույն լեզուն ստորակայության է ձղում նույն վիճակն ապահովելով հենց անկախության համար: Բավական է, սակայն, հիամեցիկ այսպես ցեսել դեպի մինչ այդ մեզ համար երազային անկախության ձևավորման սկիզբը, և, կարծում են, որոշ բացատրություն հնարավոր կլինի գտնել:

Գաղտնիք չէ, որ համազգային պայքարի վերաճած Դառաքալայան շարժումը, չնայած իր բազմամարդ ընդգրկմանը, համազգայնության իմաստով առերևութակամության վերածվելը շարժման հետագա ղեկավարների անկախ ուղղորդմանը պայքար պարզելով նույն իսկ ազգային արժեքների ղեկավարների դեմ: Եվ վերջինների մեջ թիրախ կենտրոնում էր Կապուտիկյանը: Չիմա տեղ չէ առիթ կլինի ներկայացնելու, թե ինչ եղանակներով կամ, այսօրվա ձևակերպմամբ, տեխնոլոգիաներով էր իրականացվում համարում ունեցող մտավորականների ու հատկապես Կապուտիկյանի վարկերակրումը, և թե ինչպես ինչ տեղի ունեցավ, որ ղեկունք ճանաչելու իր շուրջը միևնույն բազմությունը ժողոված ու նրա հավաքական սիրտը թուղղ համաժամանակաբանության սուղոց-վայնասուղով լեզուներ նույն այդ բազմությունը, իսկ տաղտարի հետո ոչ պակաս ոգևորությամբ նշեց նրա հորեյանական ու բուռնը: Այնուամենայնիվ, թվում է, պարխախման հիմնական եղանակը սա էր. տվյալ ժամանակաշրջանի թուրքերից դուրս նետած տրամաբանությամբ համատարած քննադատության տարափի տակ էին պահում այդ ժամանակաշրջանի կոնունիստների, որանց մեջ նաև գրողներն: Վերջիններիս իբրև մտավոր աշխարհի անհատներ, «քննադատություն» անդրադարձնելու էր սրանց արած-թողածի վրա և, ի թիվս այլոց նաև «խոսք իմ որդուն»-ի վրա, աս էլ, հասկա-

նալիորեն, բեկում էր հայրենասիրության պատկերացումները հայրենիքի խորքային յուրացման օժանդակող խորհրդանշանի արժեքների աստիճանական վանումով իբր թե ժողովրդավար հզոր պետություն ունենալու պատրանք պահովելով, այն է՝ ազգային ոգևորությունից զուրկ համամարդկային արժեքներով անկախ պետության ստեղծում: Այն, որ իրոք խաբկանք էր շարժման բարձրակետերին մեզ հեռվից ցուցադրված հայոց ազատության փարոսը, համոզվում ենք ոչ միայն այսօր Սահմանադրության ուսմանարձանը պետականորեն լեզվի օրենքի վերածնունդն հերթական նկրտման վկաները լինելով, դա ակնհայտ էր Չայաստանում դեռ նոր անկախություն հռչակված ժամանակներում, երբ երկրի առաջին դեմքն ի լուր որը ազգի հայտարարեց, թե ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է...

Ինչևէ, թե շարժման ընթացքում, թե դրանից առաջ ու հետո հայրենասիրության անչափելի լիցքեր է հաղորդել ազգակիցներին Ս. Կապուտիկյանը Չայաստանում թե սփյուռքում, և հայրենի արժեքների մեջ առաջնային տեղ է զբաղեցրել հայոց լեզուն, որը նա ոչ միայն գովերգել, այլև համախառն պայքարով է պաշտպանել թիր ուժից: Թող թույլ տրվի սասել հայրենիքն էլ դեպի իրեն բեռնված սիրո հայացքին անդրադարձ ուժ է տվել ժողովրդական սիրո լուսապսակ բոլորելով հայրենաբան հեղինակի անվանը:

Ս. Կապուտիկյան հայրենասերի առաջին ուժգին պոթեկունը տեղի ունեցավ գրական մուտքի տարիներին: «Նստք իմ որդուն»-ը դարձավ հայության հավաքական սիրտը մուտք գործելու մշտական անցագիր: Ե՛հիշտ այդ հավաքական գորուբեությունը է պայմանավորված թե բանաստեղծության թևածման, թե բանաստեղծուհու մեկնարկի հաջողությունը: Առայժմ մի կողմ թողնելով բան ու պատկերի հատվածական վրձնումները՝ անհնար է չհիանալ բանաստեղծության իբրև չափ ու կշռային մեջ դրված անբողբալական խոսքի անմիջական ու անվերջ հանդիսավորությանը, որն իր գզոնության կրելով նոր-նոր թողելով սկսող որդուն հիշած պատգամից վերածում է ազգաբախի պատկերամբ միմուռար որդու տեղ բնաբախի հերոսուհուն օժտելով համազգային մոր կերպարի խորհրդավորությամբ: Չեղինակի մտքով էլ չէր անցնում, որ հետագայում մայր լեզուն ոտնի գարկից կրծքով պաշտպանելու պատկերամբ լավագույն իրացումը ինքն էր լինելու: Միայն իմ խոստովանությունը... «... Որտեղից որտեղ իմ Չոկտեմբեր ու Նոյեմբեր մերթողոք բանաստեղծուհու մեջ խլուրաց ճանիներիս այրուլը, և ես գրեցի... «Նստք իմ որդուն»-ը: Թող տարրիմակ չթվա, եթե ասեն, որ իմ գրական ճակատագրի համար այդքան բախտորոշ այդ քերթվածը ստեղծվել է ոչ այնքան խորը գիտակցումից, սպորումի գերազույց լարումից, այլ ծնվել է, եթե կարելի է սասել, ինքնիրեն, ինչ-որ բնագոյային ներշնչումով:

Ոչ միայն Կապուտիկյանի, այլև մայրենի լեզուն փառաբանող բոլոր մեծերի համար այն եղել է ժողովրդի պատմության յուրօրինակ բաց հուշամատյան, որը միշտ լրացվելու անթիվ էջեր ունի, որոնք սահմանափակել չի կարելի, այլ պահեստ մատյանը կհավկի, մտախաղ է նրա վերջակետը: Բանաստեղծուհու լեզվերգության բոլոր դրսևորումներում կա այդ պատմությունը, բոլոր դրանք, հետաքրքիր է այն, որ թե ենթագիտակցությամբ («Նստք իմ որդուն»), թե՛ գերգիտակցությամբ («Երկուն են, Էրկուն»), «Չայ պատմանու երդումը մայրենի լեզվին», «Ոչ միայն հացի» ևն) լույս աշխարհ բերած բանաստեղծություններում ժողովրդի ու նրա մշակույթի պատմությունը նույնատիպ խորհրդանշանների փրկով է առկայանում: Միայն լեզվաշաղկապ սպասությունը ըստ «Նստք իմ որդուն» բանաստեղծության գեղարվեստական բեկման. պատ-

մությունը «քննվում է» հետադարձ ժամանակագրությամբ հազարազանց հայոց լեզուն գավակին «հանձնելու» օրվա պահից թռիչք կամրթելով հայկյան նետի սլացքի սկզբնապահի հետ, այդ բեռների միջև «ներկայացվում է» մեր պատմական երթը, որ անադարտ է մնացել Մեսրոպի սուրբ հանձնարով գիր ու մագաղաթ արարելով, հենց դրանով հույս ու դրոշ դառնալով, այդ երթը բովաղակում է և՛ հայ պանդուխտի սրտի վերքի մրմունք, և՛ ժողովրդի կռիվ երգի դրոշ ու, որ կարևոր է, դարավոր կարկաչի անընդհատելի փոխանցում օրորոցից օրորոց: Պատմությունը, սակայն, սրանով չի ավարտվում. այն նոր սկիզբ է ունենում ամեն նոր ծնունդի հետ, իսկ երբի անընդհատականության ու անադարտության համար մանկուց գիտակցության մեջ սիրտի դրոշմվեն ազգապախ խորհրդանշանի արժեքները, որոնցից են, այս մի բանաստեղծությամբ, Արարատը՝ իր վեհուրյանը նա մվճիտ ծյունով, և պապերի աճյուղը սրտին մոտ պահելու անհրաժեշտությամբ: Սի կողմից պատգամելով սրանց պահպանությունը հայ մայրը հայ արյան կանչով հայրորու ձևավորվելից գիտակցության մեջ սկզբից ենթանրկայուն է հավերժական արժեքների լեզվի, Արարատի, պապերի աճյուղի նույնացում կամ նույնացված գնահատում, մյուս կողմից ավարտադրվող սրանցից առանձնացնում է մայր լեզուն որպես բոլոր արժեքների հասնելու, դրանք տեսնել-ընթերցելու անփոխարկելի բանալի:

Այս բանաստեղծությունը գրված 1944-ին, անմիջապես դպրոց է մտնում հայրենիքում էլ, սփյուռքում էլ վերջինիս հետ մեկընդմիջտ ճակատագրական կապ ապահովելով բանաստեղծուհու համար: Այսօր էլ սփյուռքում «Առատ լուսոյ»-ի և «Ես իմ անուշ Չայաստանի» բանաստեղծության հետ որպես աղոթք է հնչում այն, և հայ պարամիները դպրոցի բակում այդ երեք գործն **աղոթելուց** հետո են շարքերով շարժվում դեպի դասարաններ: Խորհրդային դպրոցը, սակայն, պատերազմից հետո (պատերազմի ընթացքում տալիսյան բառաբանականության թուլատրված էր ազգային-հայրենասիրական գաղափարներով հագեցած գործերի հրավարակում) մինչև անցյալ դարի հիմնականների կեսերը, դուրս թողեց գրականության դասագրքերից այդ բանաստեղծությունը, իսկ հետագային «ճնախից» հետո վերականգնվեց այն **մտնելով նաև քուհերի ընդունալության քննության անգիր հանձնարարվող պարտադիր գործերի գանձը**, սա հատուկ են ասում, որովհետև, **քննվ ոչ պատահաբար, այսօր ևս այդ բանաստեղծությունը դուրս է բերված հիշյալ քանակի** (դպրոցի գործերին մոտ կանգնած վտառելի մեկից տեղեկացա, որ կարծես ծրագրի ու դասագրքից էլ են ուզում հանել այդ բանաստեղծությունը՝ «Թե մորը անգամ մաքրից հանե, // Բո մայր լեզուն չնուսանա» տողերով երեխայի մեջ մոր նկատմամբ անվստահություն առաջ բերելու «պատճառաբանությամբ» ա՛յ՛ քեզ ինտերակտիվ աշակերտակներում ուսուցում)...

Ստակիմյան ժամանակներում բարձրագույն իրամանագրով հայրենից դուրս է մղվում բազմաթիվ հայախուն ու հայաշունչ բաների գործունեությունը հեղափոխական հասկացություն բովաղակող բաների բոլոր ժողովուրդների հասկանալի միջազգային համարժեքների միանականության թելադրանքի անհեթեթ պատճառաբանությամբ: Այս իրամանագիրը այնպիսի էր արևտ եղավ մեզ համար, որի խոր հետքերը մինչև օրս դաշված են մեր լեզվի վրա: Ի՛նչ հեղափոխական հասկացություն, *պարտիս, պրոլետարիա, սեռյուլոցիա, կոնսոխուցիա, կոնսոնոլ, ղեկզատ, ղեկզացիա, դեպուտատ* և տասնյակ այլ բաներից բացի Չոնմի պապից հանվել պապական մեր գիտականները հայրենի դարավոր տերմիններն սկսեցին փոխա-



րինել օտարով գեոմետրիա, գեոլոգիա, գեոդեզիա, բիոլոգիա, ֆիլոլոգիա, մետրիկա, գենետիկա ևն: Մխիթարական չէր վիճակը նաև 50-60-ականների հայերեն լեզվաբանական գրականության մեջ. ահա *այսուտեղից* հայտնական *իդյուցիոնիզմ, ռացիոնալիստական ունկերասիզմ, գենետիկական և ռեկոնստրուկտիվիստական կոմպարատիվիզմ, նոմոթետիկական էվոլյուցիոնիզմ, սիստեմային-անալիտիկական լեզվաբանություն, ստրուկտուրալիստական ղեկիմոսցիոնիզմ* ևն: Արարատյանը պահանջում է հիշատակել, որ, հակառակ այս հայաբառ ցարի, շնորհիվ Վ. Չամբարումյանի *աստղագիտություն* բառն իր տեղը չգիցեց օտար *աստրոնոմիա*-ին: Նույն ժամանակներում (հատկապես Երևանում) սկսել էին թափ առնել ռուսական դպրոցները: Եթե ասվածին էլ ավելացվի այն, որ մտավորականների մի մասը պատերազմի ընթացքում, իսկ մյուս մասը առավել մեծ զանգվածներով, 37 ու 49 թվականներին սրածվեց, կարծում են՝ մոտավորապես պարզ կդառնա էլ լեզվաբանության համար ինչ անասելի սրածություն եղավ դա. մտավոր բանակի կորուստը հանգեցրեց մեր լեզվի գրական տարբերակի պատկառելի մի շերտի չեզոքացման, որի հետևանքները մինչև օրս վերացված չեն:


Ասել, թե «Նստք իմ որդուն»-ի հեղինակն այդ տարիներից է կրծքով *պաշտպանել* մայրենի լեզվի իրավունքները, ճիշտ չի լինի: Իր իսկ խոստովանությամբ 200 միլիոն պես ինքն էլ է ստալինյան հիպոտիսի օրվա պարտի: Այդ տարիների նրա գրավոր թե բանավոր հրապարակախոսական ելույթներն էլ գերծ չեն օտարաբանումներից: Դա ժամանակի մեծ զանգվածով նույնիսկ Ավ. Իսահակյանն ու Գ. Դեմիրճյանը: Միայն «ճնախից» հետո, ի տես մի կողմից *գարթնած արյան*, մյուս կողմից Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաքինի և Ավ. Իսահակյանի հետ ունեցած տևական նպաստություն ու բարեկամական շփումների, բարեշուքորով է սարուն Կապուտիկյանի աշխարհընկալումը: 1961-ին կրկնապատկվում է բանաստեղծուհու համաբավ շնորհիվ «Ստորուն-մեր ճանապարհի կեսին» գրքույկի:

ԳՎԿԻՑ ԳՅՈՒՆՋՅԱՆ
Շարունակելի

ՀՈԳԵՎՈՐ

«ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՊԱՐՏԱԲՈՐ Է ԳԱՅԹԱԿՐՈՒԹԵԱՆ ՔԱՐԸ ՀԵՌԱՑՆՆԵԼ ԵՒ ՉԼԻՆԵԼ ՀՐԱՊՈՅՐ ԱՅԼՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ»

ՀՐԱՋԴԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ ՏԵՐ ՍԻՈՆ ՔԱՀԱՆԱ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՎԱՐԴԱԲԵԱՌԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐԴԱՑԱԾ ՔԱՐՈՋԻՅ



«Քարոզութեամբ առաքելայի և Առաջին ճախարհային շայտապան աշխարհի թաղանթի Թաղանթի և նրա հրաշքազորութեամբ, սքանչելի կերպով բորոտները սրբվում էին, դէնը հալածվում և բազմաթիվ հիվանդութիւններ փարսկում: Երանելու արարածալոր քարոզութեամբ, նորոգվեց հայրոց անդառնալով ի տես բոլորի, և մանաւանդ խառնախրտ և կրապաշտ Սանատրուկ արքայի»:

Թաղանթի համբարը լսող Սանդուխտ արքայադուստր, որ հազիւ 15 տարեկան և շատ գեղատեսիլ էր, եկա լսելու Քրիստոսառաք Չայապետին ուսելով Սուրբ առաքելայից նրան իր հոգու հայրը կարգեց: Չքննադատելով պատանուին երկար օրեր հետևեց Թաղանթին: Առաքելը տեսնելով Սանդուխտի անասանաճ վերջին Քրիստոսին, Նրան մկրտեց, բաշխելով նրան Սուրբ Գրագու շնորհները: Նույնժամայն լոյս ծագեց երկնքից Սուրբ Կոյսի վրա լոյսի մեջ բարբառ լսվեց. «Չուրանցիոր դուստր գովելի բարի հարսնացու երկնային Թագաւորի»: Շատեր տեսնելով լոյսն և լսելով ծայրը հաւատացին Քրիստոսին: Այս ամենը քուրմերը պատմեցին Սանատրուկին: Այն ատեն թագաւորն առժամայն բանտարկեց Թաղանթին իսկ հետևորդների մի մասին սրով կտորեց, միւս մասին՝ բանտարկեց, Սանդուխտին նույնպէս: Ապամուսմանների վրա լոյս իջավ, որը տեսնելով շատերը հաւատացին Քրիստոսին: Անհաւատները կորուցան լոյսի աստ-կուրբինից և չհամարձակվեցին սուր բաշել Առաքելի վրա: Երևաց Յիսուսը Թաղանթին ասելով. «Վնուր կաց, Թաղանթ, ես քեզ հետ եմ և ազատելու եմ այստեղից»: Անպատում ուրախութեամբ լցւած Թաղանթն ասաց առ Տէր. «Մի բողբուր գիս առանձին»: Յիսուս յայտնեց առաքելային իր կամքը. Քե՛ հայրերից անձնա՛ն թիվ է փրկվելու, մինչդեռ կլինին բազմաթիվ յուրաներ... Նոյն գիշերը, բանտարկեցներին մկրտեց՝ 33 ամե: Եւ Նոյն գիշերը խոսեց աստաման մկրտեցիների և բավակեց նրանց գետին, իսկ առաքելը ձեռքը դնելով բշկեց: Եվս մի քանի օր տանջվելուց հետո առաջին վկայութիւն համայն հայրության Սանդուխտ կուսամայրը, ճախարակվեց դեռատի հասակում... Երբ օր ու գիշեր լոյսը մնաց կոյսի մարմնի վրա, 2000 հոգի հաւատացին Քրիստոսին, չհեռացան այնտեղից: Երբ օր անց կոյսի բաղձանն Սանատրուկ Թաղանթին հաշվի կոչեց իւր Դատեր միտքը հափշտակելու առթիվ... Երբ երկու առիւծները հարձակվելու-հոշոտելու փոխարեն լիզեցին Սուրբ Առաքելի հողաթափերն ու ճատեցին, երբ հնոցի կրակը անգոր եղավ նրան վնասելու,

ևս 433 հոգի, տեսնելով այս հրաշքերը, հաւատացին ու սրանք ևս մկրտվեցին: Չորքերը թագաւորի հրամանով վեր հանեցին առաքելային բարձրաստիակ. Թաղանթ աղօթեց, ներում բաշխելու նրանց դահճացն յետալու խաչակնքեց ասաց. «Գործիք Չեր դահճական»: Դահիճը սպանեց իր եղբայր Ջեմենտոսին որին Թաղանթ կենդանացրեց աղօթքով, այս տեսնելով՝ 720 հոգի հաւատացին, և սրանք ևս մկրտեց Սուրբ Առաքելը:

Թագաւորի հրամանաւ ճախարակեցին նաև Սուրբ Թաղանթին: Երկրաշարժ եղաւ այն ժամ, ժայռը ճեղքվեց իր մեջ առնելով Սուրբի մարմինը, իսկ անօրէնները փախան: 3440 այր ու կին սրբազորովեցին ձեռնաբ վիմացեալ առաքելի:

Սիրելի գաւակներ, հայրց 2-րդ կիրակին է վարդաւարիցն անց. արեգակն այսօր խեցգետնի համաստեղութիւնից անցնում է առիւծ: Յայտնի է, որ այս աշխարհը փորձութեանց վայր է: Քրիստոնեան պարտաւոր է գայթակհութեան քարերը հեռացնել և ինքը չլինի հրապոյր այլոց ճանապարհին: Մեքը է մարդկանց այսպիսի կացութեան մեջ դնել. մեկը ակամա կայաթափ այդ քարից, որը դու կլինես կամ ես: Քրիստոնեան չպետք է լինի ինքնազոյն և լեթարգիկ անձ՝ մահաբուն մտած կամ թմրած հասարակութեան մեջ, ուր ամեն մի անփորձ երիտասարդ չի կարող շրջանցել փորձութիւններն աշխարհիս: Սիրելի գաւակներ, մեր այսօրան անտարարն՝ *Մատթ.18,10,14: կանգ առնեք այս կտորի վրա, ուր Տէրն ասում է...Որանց հրեշտակներն երկնքում, ասում է Յիսուս,- միշտ և հաճապագ տեսնում են երեսն ին Յօրն երկնաւորի»: Տիրջը ժամանակ յուրացիներից ընդունած էր հրեշտակախոսութիւն, հրեշտակաբանութիւն: Գրեցները համոզուած էին թէ՛ իւրաքանչիւր ազգ ունի իր հրեշտակը. ամեն մի տարր նոյնպէս՝ քանի, որոտ, փայլակ, անճր և այլք ըստ կարգի, նոյնպէս և իւրաքանչիւր երեխա նոյնիսկ ամեն մի խոտն ունի իւր հրեշտակը: Ասել թէ՛ «Նրանց հրեշտակները հաճապագ տեսնեն երես Յօր ինդ, ուր յերկինս է»: Հաւատարագօր է ասելուն թէ երեխաներն արտունած են ուզած պահին հաղորակցելու զիտ Սատու իրենց արտի ճշիւնով հրեշտակների միջոցաւ: Սա արտացոլումն է այն դիրքի, որ միայն պալատականներ՝ իրախարար և աստիճանաւորները ազատ ել ու մուտի նախաբն ունին քաղաւորի մոտ: Երեխաները, սիրեցեալ ժողովուրդ հայրց, արտունած են Աստոյ աչաց առջև այն աստիճան մինչդեռ նրանց պահապան հրեշտակները միշտ ազատ են անցնելու Աստոյ ներկայութեան և անմիջական հաղորդ լինելու Արարչին:

Մեզ համար մեծ արժեք է երեխայի մեջ դուած շնորհը: Նշանակալից է նաև այն թէ որը մենք կարողացնենք նրա մեջ՝ բարի՛ն թէ չարը. չլինի որ մենք խափանենք աստուածագիտութեան զանձերը երեխայի, խեղդենք և հիւծենք այն: Նրա հնարաւոր կարողութիւնը շրջել չար նպատակների վտանգաւոր է և մեզ, և նրա համար: Ամեն երեխայի մեջ դուած է անասանա կարողութիւն չար կամ բարի գործելու, նրանք օժտւած են և՛ օգտակարը, և՛ սրան հակառակը գործելու: Ծնողների, ուսուցիչների և եկեղեցու վրա է մեծագոյն պարտք՝ հսկելու, որ երեխայի հոգու կարողութեան գորութիւն կենտրոնանա, հսկվի դեպի բարին: Իսկ նրա բարի հակումները խափանելու կամ փակ պահելը մեղքերի մեղքն է:

Սակայն մենք նախ պարտաւոր ենք մեր անձերը շարժել ի բարին, որպեսզի չլինենք գայթակհութեանց քարեր այս աշխարհի, որ է հիմք հաւերձականի: Եթէ ընտրեք բարին, կպարեք ցվերջն կեանքի՝ և՛ այստեղ, և՛ յախտեանակամի մեջ: Իսկ սրան հակառակը կվճարենք այստեղ վաղաժամ և այնտեղ չենք լինի և ընդմիշտ կհեռանանք երեսացն Աստոյ, որ է օրինեալ յախտեան:

ՀՈԳԵՎՈՐ ՏՈՆ Ա Յ ՈՒ Յ Ց
Օգոստոս 2 - Սուրբ Վահան Գողթնեցի
Օգոստոս 15 - Սուրբ Աստվածածին վերափոխումը. Խաղողորհնեց
Օգոստոս 16 - Մեռելոց
Օգոստոս 24 - Սուրբ Աստվածածնի ծննդեան տարը Հովակիմ և Աննա

ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՈՒԼԻՑ

«ՔՐԻՍՏՈՆԵԱՎԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԶՐՈՒՑԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔ – ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ձիփի» պատուհանից մի մարդակերպ քաղաքի կենտրոնում ծխախոտի դատարկ տուփը շարտում է հենց անցորդների կամ ոտնակնների ոտքերի առաջ, և ոչ չը քի բռնում այդ ձեռքը. չի համարձակվում. չե՛նք համարձակվում մե՛զ ինչ... Սրանք մանրուքնե՛ր են: - Իհարկե՛ ոչ: Իհարկե՛ դա մեծ չարիք է՝ այդ մատոն-դուրբունը, այդ հոգեբանությունը՝ անտարբերության, անհարողութեան հոգեբանությունը: Ավելին. քանի դեռ այդ ամենին նայում ենք որպես մանրուքների, մենք չենք կարողանալու հաղթահարել ստրկամտությունը, ինչը, որպես կանոն, ամբողջությամբ «զբաղեցնում է» պատասխանատվության բացակա տարածքը: Հասկանալի է՝ եթե այդ մարդը ծխող չլինի, կոկա-կոլայի շիշ պիտի չպիտի, մի բան պիտի չարտի, քանի դեռ չի քաղաքակրթել: Ինչ վերաբերում է ձեռքը բռնելուն... օրենքը պիտի յուրաքանչյուրիս արտի մեջ լինի: Եվ ինչո՞ւ միայն Գոշականքը: Տեսած կլինեք բազմաթիվ սրբավայրերի պատերին յուրաներկով «հավերժացված» անուններ, անգամ պղծություններ... Ուզում են զգուշացնել դա անողներին, որ իրենք անձեք են ժառանգելու, որ ոչ թե հավերժանալու են, այլ ընդհակառակը, ջնջվելու են Հավերժությունից: Ուշքի՛ եկեք, սրբությունը պետք է Աստուծու երկուդով համբուրել, սրբավայրը պետք է մաքրել, բարեկարգել, մի ծուռ բան ուղղել, այլ ոչ թե պղծել...»

Հատված Բյուրավանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Դազար քահանա Դեորոսյանի հարցազրույցից՝ տպագրված «Քրիստոնյա Հայաստան» թերթում, 2010, մարտ, թիվ 5:

ԱՍՏՎԱԾԱԾՆՅԱՆ ԲԱՌԱՐՄՆ ԾԱՌՏԻ ԱՊԵՅՈՒՐ

Սամսոնը Իսրայելում դատավոր է եղել մոտ 20 տարի: Նա ֆիզիկապես շատ ուժեղ էր, և այդ ուժի գաղտնիքը նրա երկար մազերի մեջ էր: Մի անգամ, երբ նա շատ փոշտացիների էր սպանել, մոտ 3 հազար իսրայելացիներ՝ իր հայրենակիցները, վախենալով փոշտացիների վրեժխնդրությունից, եկան, նրան կապեցին պարաններով, որպեսզի հանձնեն թշնամուն, ու դուրս բերեցին քարայրից, ուր Սամսոնը ապաստանել էր: Իսրայելացիները Սամսոնին խոստանում են, որ իրեն չեն սպանի ու կապկպելով դուրս են հանում քարայրից: Սամսոնը կապկպած գալիս է մինչև Ծնոտ կոչված վայրը, ուր փոշտացիներն աղաղակելով ելնում են նրա դեմ: Այդ ժամանակ Աստուծո հոգին աջակցել է լինում Սամսոնին, նրա բազուկների վրայի պարանները դառնում են կրակից այրված թելի մանա, և կապանքները հալվում, թափվում են նրա բազուկներից: Նա գտնում է գետին տապալված էշի մի ծնոտ և դրանով փոշտացիներից հազար մարդ սպանում: Սամսոնն ասում է. «էշի ծնոտով կրնաջնջեմ նրանց, որովհետև էշի ծնոտով կոտորեցի կարող մարդ»: Նա ծնողը ձեռքից զգու՛մ է և այդ կայր անվանում «Ծնոտի կոտորած»:

Այնուհետև, երբ Սամսոնը խիտ ծարավում է, խնդրում է Աստուծու. «Դու քո ծառայի ձեռքով հաջողեցրի այս մեծ փրկությունը, իսկ իմա ծարավից պիտի մեռնեմ և անթվախտների ձեռքը ընկնեմ»: Եվ Տերը Ծնոտ կոչվող վայրում մի անցք բացեց, նրանից ջուր դուրս եկավ, ու խմեց, ոգի առավ և զովազավ. այդ պատճառով դրա անունը դրվեց «Ծնոտի աղբյուր»:

Ամեն:

ՏԵՂԵԿՈՒՅԹ - ԱԶԴ - ՆԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՀԱՍՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊՐԱՏՎՈՐՈՒԹՅՈՒՆ



Ուրախությամբ ողջունում են Վանաձորում հիմնադրված և արդյունավետ գործունեությամբ հանրապետությունում աչքի ընկնող «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» հասարակական կազմակերպության նախաձեռնությունը՝ Վանաձոր քաղաքում կատարել Մարդու իրավունքների հայկական դպրոց որպես միջազգային ուսուցողական կենտրոն: Նրան, ով ի մտու ծանոթ չէ այս կազմակերպության ավելի քան քսան տարվա գործունեությանը և այդ տարիների ընթացքում արձանագրած հաջողություններին ու նույնիսկ նվաճումներին, նախաձեռնությունը կարող է փորձի՞նք հավակնուտ և անիրականանալի թվալ, մինչդեռ կազմակերպության ներուժին որոշակիորեն ծանոթ յուրաքանչյուր ոք նախաձեռնությունն ընկալում է իբրև ՀՄԻԿ-ի տասնամյակների գործունեության միանգամայն տրամաբանական շարունակություն:

Ես գիտեմ, որ այս դպրոցի հիմնարկեքն արդեն իսկ կատարված է, և հաջողության պարագայում դպրոցն իսկապես կարող է դառնալ տարածաշրջանում իր տեսակի մեջ եզակին ու միակը: Տեղակ են նաև այն քայլերից, որ պարբերաբար ձեռնարկվում է ՀՄԻԿ-ը դպրոցի շենքի շինարարությունը լիարժեք բաժնով սկսելու համար: Ցավոք, մեր իրավունքային մեջ լավագույն գաղափարներն ու ծրագրերը իրականանում են մեծ դժվարություններ ու պատճեններ հաղթահարելու մեծագույն ծիզով ու զոհողությամբ: ՄԻԿ-ի կառուցման գաղափարն ու ծրագիրը, կարծում են, հենց դրանցից մեկն է: Եվ այս նախաձեռնությանը հասարակական վերաբերմունքի ու մասնակցության աստիճանը նաև յուրօրինակ հանրաբանական հետազոտություն է՝ արձանագրելու հասարակության ներկա նախաձեռնողությունն ու հոգածությունը իր ապագայի համար:

Հուսով եմ, որ մեր հասարակությունն արդեն հասունացած է այնքան, որ հուսալիք չի անի հենց ինքն իրեն:

ԳՐԻԿ ԲԵՆՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ՄԻԿ) ՀԵՆՔԻ ՆՈՐ ՊԱՏԱԴԻՐՆԵՐՆ ԵՆ

ՄԻԿԻ 15-րդ դասընթացի մասնակիցները - 60 քար կամ 15000 դրամ
Ֆիրմուսի Նավասարդյան, Գեղարքունիքի մարզ, գ. Օժվազուղ - 12 քար կամ 3000 դրամ
Թի Վեճ, Անգլիա, ք. Լոնդոն - 23 քար կամ 5750 դրամ (10 ֆունտ ստերլինգ)
Լուսինե Երիցյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր - 8 քար կամ 2000 դրամ
Ալինա Պետրոսյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր - 4 քար կամ 1000 դրամ

ՄԻԿԻ ՀԵՆՔԻ ԿՈՒՐՑՄԱՆ ՀԱՍԱՐ ԱՆՉՐԱՍԵՆՏ Է՝ 1.763.520 քար կամ 440.880.000 դրամ

ՆԱԿԻՐԱԲԵՐՎԵԼ Է՝ 13.246 քար կամ 3.311.440 դրամ գումար:
ՄԱՅԵԼ Է՝ 1.750.274 քար 437.568.560 դրամ

Փոխանցումները կարելի է կատարել ՅՈՒՆԻԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ բանկային հաշվեհամարներին՝
-241011034139 (դրամ), -241011534138 (եվրո),
-241011134137 (դոլար), -241011234135 (ոսլոն)
ստացող՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
նպատակ՝ «ՄԻԿ» շենքի համար»

Տեղեկությունների համար՝ զանգահարել (0322) 22967 հեռախոսահամարով:

ՀՄԻԿ նախագահության, աշխատակազմի և շահառուների անունից շնորհակալություն ենք հայտնում բոլոր նվիրատուներին Մարդու իրավունքների կրթության զարգացմանը նպաստելու համար:

Նայ | Մեզ | Կոչիչ քարտեր | ՀՄԻԿ | Գրքեր

FORUM
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՊԱՏՇՊԱՆ ԿԵՆՏՐՈՆ
www.acrpc.am

Տվյալների լրացման կարգը

«Registration» կոճակը սեղմելուց հետո կբացվի նոր էջ:
Պարզապես լրացրեք Ձեր տվյալները՝ ընտրելով գրանցման անուն և գաղտնաբառ, ինչպես նաև գրանցեք Ձեր անունը, սեռը և Ձեր հավիտյն բնութագրիրը:

Մուտքագրեք կապույտ դաշտում գրված ծածկագիրը, համոզվեք, որ լրացրել եք բոլոր անհրաժեշտ տվյալները, վերջում սեղմեք «Register» կոճակը:

Գրանցում

«Register» կոճակը սեղմելուց անմիջապես հետո Ձեր տվյալները կմուտքագրվեն և կստուգվեն ՀՄԻԿ կայքէջի պատասխանատուի կողմից:
Տվյալների ստուգումից հետո Ձեր էլեկտրոնային հասցեով կուղարկվի Ձեր գրանցումը հաստատող նամակ, որտեղ նշված կլինի ֆորում մուտք գործելու հասցե:

Գրանցվելուց հետո ցանկացած պահի կարող եք մուտք գործել ֆորում սեղմելով վերևի աջ անկյունի «Login» կոճակը և մուտքագրելով Ձեր անունն ու գաղտնաբառը:

Ֆորումից օգտվելու

Ձեր անդամագրումը հաստատվելուց հետո շատ հեշտ է ֆորումից օգտվելը:

Ֆորումի ձայն կողմում դուք կտեսնեք առաջարկված կրթական բաժնի բեմաների ցանկը՝ «Categories»:

Եթե ցանկանում եք տեսնել նախկին բեմաներում, սեղմեք «Archives» թղթապանակը:

Խրախուսելի է Մարդու իրավունքների և ՄԻԿ բեմայով իրական կյանքին առնչվող կարևոր հարցերի բարձրացումը:

Զեզ հետաքրքրող բեման ընտրելուց հետո սեղմեք տվյալ կո-

ձակը, և կբացվի համապատասխան ֆորումի բեմաները:

Մեկնաբանություն բողոքելու

Ձեր առաջարկը ձևակերպելուց կամ բեմաներում բեման ընտրելուց հետո մեկնաբանություն կատարելը շատ պարզ է:

Պարզապես սեղմեք ֆորումի աջ անկյունի «Add Post» կոճակը, գեղեցիկ Ձեր առաջարկը կամ մեկնաբանությունը և սեղմեք «Add»:

Բեմանում սկսելու

Եթե կունենաք ՄԻԿ որևէ բեմայով բեմաներում նախաձեռնելու առաջարկ, որը խրախուսելի է, ուղարկեք Ձեր առաջարկը հետևյալ հասցեով՝ acrpc@acrpc.am

Ինչպես դուրս գալ ֆորումից

Ձեր առաջարկն ուղարկելուց հետո ֆորումից կարող եք դուրս գալ՝ սեղմելով ֆորումի վերևի աջ անկյունի «Logout» կոճակը:

Հաճախ այցելեք ֆորում տեսնելու՝ արդյոք Ձեզ արդեն պատասխանել են:

Հետաքրքրող բոլոր հարցերով դիմել acrpc@acrpc.am էլ. հասցեով:

Հոստով ենք, որ Դուք կցանկանաք մասնակցել ֆորումին:

ՈՒՂՈՒՄ

Հարգելի՛ ընթերցող, բերթի նախորդ համարում տպագրված Արամայիս Միրզախանյանի՝ Կարիկ Պասմանյանին մվիրված հողվածի վերաբերյալ խմբագրությունը, «Ձայն բանաստեղծի» վերտառությամբ ներկայացնելով Կարիկ Պասմանյանին, 1989թ.-ը նշել է որպես նրա մահվան տարի, որը նրա անհետացման տարեթիվն է: Հայրենի ենք հեղինակի և Ձեր մերողանությունը:

Թերթը հրատարակվում է հիդեոլոգիական Համագործակցության զարգացման միջինկեղեցական կազմակերպության (ICCO) ֆինանսական օժանդակությամբ: Թերթի բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը:

Հրատարակության 7 տարի
Ֆինանսողի և հրատարակիչի՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2003, ք. Վանաձոր, Շիրակցու 1-ին կրթ., թիվ 2
Ֆեմ.՝ +374 (322) 2-29-67
Հեռախոսահամար՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ gmanoukian@acrpc.am, ic@acrpc.am
Կայքէջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Գևորգ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Խմբագիր՝ Գոռ ՄԱՐԳՍՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ Անի ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Թղթակցությունները են գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս ողջունել «Իրավական մշակույթի» պարտադիր է:
Հրատարակումների բովանդակությունը կարող է շիանապատասխանել խմբագրության կարծիքին:

Ստորագրված է տպագրության 2010թ. 08. 28:
Ծավալը՝ 2 տպագրական մասով
Տպագրանակ՝ 2000
Տպագրվել է «ՄԻՍ տպագրատուն» ՍՊԸ-ում:

Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура